

Գահիրէի «Յուսարեր»-ը վերոգրեալ խորագրով խմբագրակա-
նով մը կ'անդրադառնայ ներգաղթի հարցին, որ բովանդակ ախիւսքի
ևայուրեանն ամէնէն կեանական հարցը կը կազմէ այս պահուս: Իր
Ընդհանուր շահեկանութեանը համար ստորեւ կուտանք այն խմբա-
գրականը:

Շուրջ տարի մըն է, որ ներ-
գաղթի մասին կը խօսուի: Հա-
յաստանի ձեռնհաս իշխանու-
թեանց կարգադրութեամբ հայ-
րենիքի դռները բաց յայտարար-
ուած են գաղութաճայութեան
առջև: Կոչեր եղան հայրենիքէն՝
սփիւռքի այն բաղձութիւններուն
որոնք քառորդ դար առաջ, ահա-
ւոր ու ահնոտ զէպքերու հար-
կադրանքին տակ, խուճապահար
լքեցին իրենց հայրենիքը եւ ա-
պաստանեցան ուր որ կրցան:

Ու այսօր, քառորդ դարու տաղ-
նապէ ու տառապագին պանդրխ-
տութենէ ետք, նոյն այդ բաղձու-
թիւնները հայրենիք կը կանչը-
ուին: Կարելի՞ է գտնել հայ մը,
որ յուզումով չլսէ եղած կոչը,
որքան ալ հին ու դառն յուշեր
գան պղտորելու միտքերը: Դրժ-
ուար է գտնել նման հայ մը, եթէ
հարազատ հայ է ան ծնունդով ու
հողիով: Կոչը գործի վերածուած
է արդէն եւ գաղթականներու կա-
րուաններ ճամբայ կ'լած են, մինչ
ուրիշ հազարաւորներ արձանա-
դրուած՝ կը սպասեն ձեկնումի
հրամանին:

Ի՞նչ ուրախութիւն:
Հայը իր հայրենիքը ունի, իր
արիւնովն ստեղծած, եւ պէտք է
որ իր հայրենի հողին վրայ ըլլայ
հոն աշխատի ու հոն ստեղծա-
գործէ: Դժգոհ չէ իր ապրած ու
հիւրնկալուած երկիրներէն, ու-
րոնք գնահատեցին դինք, իր խա-
ղաղ աշխատանքը, ցեղային իր
ստեղծագործ կարողութիւնները
եւ օգտուեցան անոնցմէ:

Այսօր, քսանհինգ տարի շար-
շարագին ու տարադիր կեանքէ մը
ետք, կը մեկնին շատեր, պատաս-
խանելով հայրենիքի հրաւերին.
րնական ու հասկնալի՝ բոլորին
համար: Կարելի՞ է կասկածի տակ
առնել որեւէ հայ, հայրենադար-
ձի այս օրերուն, կասկածի տակ՝
անոր ուրախութիւնը, վերադար-
ձի բաղձանքը, գոհարեութեան եւ
օժանդակութեան տրամադրութիւ-
նը. մէկ խօսքով՝ անոր անհուն
հայրենասիրութիւնը, իրը զգա-
ցում ու գործ: Պարկեշտ մարդ-
մը չի կրնար հաստատական պա-
տասխան տալ, պարկեշտ ու հա-
րազատ հայ մը՝ չի կրնար տխուր
վկայութիւն տալ, հայենասիրու-
թիւնը իրեն՝ վերապահելով եւ
ուրացումը նետելով ուրիշներու
ճակատին:

Պարզ իրողութիւններ՝ ասոնք,
պարզ խօսքեր, բայց, հակառակ
ասոնց, կան միշտ մարդիկ, խրմ-
բաւորումներ ալ, որոնք պահը
յարմար կը դատեն պայքար բա-
նալու, հակառակորդ ուրուա-
կաններ տեսնելու, ստեղծելու ի
հարկին. պայքար՝ ի նպատակ ներ-
գաղթի եւ յանուն հայրենիքի:

Պայքար՝ ըսելու համար թէ
հայրենասէր են իրենք, ուրիշներ՝
ոչ. հայաստանեա՞ն են իրենք,
մինչ ուրիշներ «հակահայաստան-
եան» . . .

Ճառեր, յօդուածներ եւ ճոռոմ
ու խայտարղէտ «խմբագրական»-
ներ, քսու խօսակցութիւններ՝ ա-
կումբներու եւ սրճարաններու
մէջ, նոր «փաստեր» ու «վկայու-
թիւններ» ճարելով, ապացուցանե-
լու համար՝ թէ բուն, ճշմարիտ
հայրենասիրութիւնը իրենցն է,
գաւաճանութիւնը՝ ուրիշներու-
նը . . .

Այս մարդիկը, որոնք կը յու-
սան շնորհներ ձեռք բերել եւ
խօսքով ու աղմուկով հայրենա-
սէր դառնալ, ասոնք կ'ըմոռնան
(կամ այնպէս կը ձեւացնեն), որ
ներգաղթի պահանջը 1945-ին չէ
որ սկսած է, թէ ամբողջ քառորդ

դարէ ի վեր Դաշնակցութիւնն ու
Դաշնակցական օրկանները բար-
ձրագաղակ ներգաղթ պահանջած
են հայրենագուրի բաղձութիւն-
ներուն համար: Պահանջած են՝
բանալ հայրենիքի դռները, եւ աս
ոչ միայն հայրենասիրական զգա-
ցումներէ մղուած, այլ եւ հայրե-
նիքը զօրաւոր տեսնելու համո-
զումէն թելադրուած:

Պայքարողները գիտեն այս ա-
մէնը, բայց կը պայքարին, գիտեն
նաեւ թէ մեծ թիւով դաշնակցա-
կաններ կան արձանագրուողնե-
րուն մէջ, բայց պիտի պայքարին
դարձեալ, ներգաղթին «հակա-
ռակ» ցոյց տալու համար, որպէս-
դի «ներգաղթը» իրենց գործը
դարձած ըլլայ. որպէսզի «հա-
յաստանասիրութիւնը» իրենց մե-
նաշնորհը դարձած ըլլայ, որպէս-
զի, հա՞րկ է ըսել, դիրքեր ապա-
հովեն ուր որ կարելի է, այսօր
կամ վաղը: Ու կը պայքարին
հազար միջոցներով ու առիթնե-
րով Մայիս 28-ի դէմ, յանուն
«պետականութեան» գաղափա-
րին, երբ նոյն այդ թուականով
թրծուած բաղձութիւններն են ա-
ռաջին ներգաղթողները:

Կը պայքարին մարդական կազ-
մակերպութեանց մէջ, ափ մը
հրաժարականներ շահագործել
փորձելով, ափ մը անփորձ ու
դաւադիր խաղերու գոհ պատանի-
ներ, երբ հազարաւոր բաղձու-
թիւններ, առոյգ ու հաւատաւոր
փարած կը մնան նոյն գրոշին,
Սիւրիայէն մինչեւ Լիբանան եւ
Պաղեստինէն մինչեւ Եգիպտոս:

Հետապնդուած նպատակը, —
ոչ ներգաղթի յաջողութիւնը, ոչ
մարդական շարժումը, ոչ ալ հայ-
րենիքն ու իր պետականութիւնը,
այլ քայքայումը Դաշնակցու-
թեան, — խոչընդոտը իրենց
պանծալի վերելքին, իրենց հան-
րային ու հայրենասիրական հը-
րարորոք գործունէութեան . . .

Չունինք պատրանք:

Գիտենք թէ պիտի շարունակ-
ուի այս պայքարը: Հակառակ մը
դեռ այս օրերուն, Հայաստանի
պատուիրակներն իսկ հրապարա-
կով համերաշխութիւն ու «միաս-
նականութիւն» կը քարոզեն, կոչ
կ'ըլլայ անխտիր բոլորին — չէ-
զոք կամ կուսակցական — որ
հայրենիք վերադառնան, երբ մի-
ակ ու գերագոյն նշանախօսք կը
յայտարարուի պաշտօնապէս ու
անպաշտօն՝ ազգային համերաշ-
խութիւնը:

Եթէ ճիշդ են այս ամէնը, եթէ
սուտ չեն անոնք — եւ կը հաւա-
տանք թէ չեն — այն ատեն ան-
ըմբռնելի չեն դառնար արտա-
սահմանի մանկլաւիկներու վրիլը-
լուկը, անկարելի պայքարը Դաշ-
նակցութիւնը մեկուսացնելու
կամ քայքայումի մէջ ցոյց տա-
լու, մէկ երկու ողորմելի ու կեղծ
հրաժարականներու հրատարա-
կութեամբ: Անըմբռնելի հաւա-
նարար, հանրութեան լայն խաւե-
րուն համար, բայց ըմբռնելի մե-
զի համար: Գիտենք մենք, որ
մարդիկ հակադրուած են պայ-
քարիլ, այսպէս, թէ իսկ ցնորք-
ներու դէմ, երեւակայական թըշ-
նամիներու դէմ, իրենց վարկ ըս-
տեղծելու եւ շնորհներու հասնե-
լու համար: Մոլորանքի մէջ պա-
հելու համար հայրենիքն ու իր
պատուիրակները, որպէսզի ըս-
ուի, խօսուի ու գրուի թէ ան-
հո՞ւն, բո՞ւն պայքար կայ Հա-
յաստանի դէմ ու ներգաղթի դէմ,
բայց շնորհի իրենց ամէն բան կը
փշրուի եւ բաղձութիւնները դէ-
պի հայրենիք կը խուժեն . . .

Տխուր պայքար, բայց տխուր
չենք մենք, թող մղուի ան, այս
պայքարը, այս կերպարանքովն
իսկ, յանուն հայրենիքի, ու-
րովհետեւ, ո՞վ գիտէ, թերեւս,
հայրենիքի անունն իսկ ազնուա-
ցրնէ գիրենք, գոնէ աստիճան մը:
Գիշ մը աւելի մաքուր դարձնէ,
քիչ մը աւելի զգատտ, քիչ մը ա-
ւելի հայ ու հայազէմ:

Ուր էր թէ հայրենիք երթային
այս նոյն մարդիկը, երթային հոն
հայհոյելու, բայց աշխատելու
համար. երթային գոնէ քրտինք
թափելու համար հայրենի հողին
վրայ, հոն ուր արիւն թափած են
ուրիշներ . . .